ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Լ. Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դժվար է գերագնահատել հաղորդակցության զանազան միջոցների հսկայական գերը մարդկային հասարակության առաջընթացի բնագավառում։ Ճանապարհորդները գեռ չհետազոտված շրջաններում իրենց ուղևորությունների ժամանակ բազմիցս զարմացել են այն բանից, որ անապատների, լեռնաստանների կամ անտառախիտ վայրերի ժողովուրդները իրենց դիմավորել են առանց զարմանքի որևիցե նշանի. այն արագությունը, որով ստացվում ու տարածվում էին կարևոր լուրերը, հաճախ կյանքի և մահվան հարց էր դառնում։

Քսենոֆոնը, խոսելով Հայաստան ներխուժած պարսից զորավար Կյուրոսի մասին, հաղորդում է հետևյալը. «...Նա [Կյուրոսը] հարցրեց [արմենների թագավորի որդի] Տիգրանին, թե որոնք են այն լեռները, որտեղից Խալդայները [խալդերը] ցած են արշավում և կողոպտում [արմեններին]։ Տիգրանն այդ լեռները ցույց տվեց։ Եվ նա հարցրեց նորից. «Այդ լեռներն այժմ անմարդաբնա՞կ են»։ «Հարկավ, ոչ,— ասաց Տիդրանը,— այլ միշտ այնտեղ են նրանց լրտեսները, որոնք մյուսներին ազդանշանով իմաց են տալիս, ինչ որ տեսնում են»։ «Իսկ ի՞նչ են անում դրանք»։ «Օգնության են գալիս,— ասաց Տիգրանը»[1]։

Այսպես, հեռավոր տարածությունների վրա զանազան ազդանշաններով մարդիկ իմաց են տվել այն, ինչ որ տեսել են։

Մարդկանց հաղորդակցման պարզագույն թվացող միջոցն, իհարկե, լեզուն է, որի գործածությունը հանգեցրել է հնչյունային (ակուստիկ) մյուս միջոցներին։ Վերջիններին զուգընթաց, կամ երբեմն զուգորդված, օգտագործվել են նաև կապի տեսողական (օպտիկական) միջոցները։ Ժամանակի ընթացքում բարձր մշակույթ ունեցող հին ժողովուրդների մեջ տեղեկությունների հաղորդման տեսողական միջոցները, դատելով ըստ նկարած պատկերների (պատկերագրերի), հանգեցրին գրերի գյուտին։

Թեպետ ազդարարման այս երկու եղանակների հնարավորությունները արտակարգ բազմապան են, այնուամենայնիվ, դրանք իրենցից ներկայացնում են ճիշտ նույն երկու սկզբունքը, որոնք հասարակության կյանքի հենց սկզբից ծառայել են միևնույն նպատակին։

Ինչպես յուրաքանչյուր այլ ժողովուրդ, այնպես էլ հայերը, հնագույն ժամանակներից սկսած, մշակել են հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցների յուրահատուկ սիստեմ, որը բխել է իրենց բնաշխարհի առանձնահատուկ պայմաններից։ Պատմա-ազգագրական կցկտուր տեղեկությունները, ինչպես նաև ազգագրական դաշտային և համեմատական այլ նյութեր հնարավորություն են տալիս շատ թե քիչ լրիվ կերպով ուրվագծելու այդ միջոցների այն հիմնական ձևերը, որոնք բնորոշ են եղել հայ ժողովրդին։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ ժողովրդական «Սասնա Ծռերը» դյուցազնավեպում իր հատուկ տեղն է գտել հնչյունային հաղորդակցության մարմնացումը հանդիսացող Ձենով Հովանը, որի հենց անունն էլ վկայում է նրա հիմնական կոչումը էպոսում, Բոլոր դեպքերում, երբ հայրենի Սասունը վտանգի առաջ է կանգնում, որպես հաղորդակցության լավագույն ու միակ միջոց, հանդես է գալիս Ձենով Հովանը.

...Ձենով Հովան Էնպես ձենով էր,
Որ յոր զոմշի կաշի կը փաբբեր զինք
Ու նոր կը բոռար, որ չլնի պատռեր...[2]

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 406—407։

[2] «Սասունցի Դավիթ», Երևան, 1961, էջ 94։

Քառասուն ավուր նամբախ Զենով Հովանի ձեն կրներ:
...Զենով Հովան սկոն զարմանալի ձեն ուներ...3

Ինչքան էլ հնագույն, այնուամենայնիվ, հաղորդակցության ձայնային՝ կանչելու այս եղանակը հայ գյուղում, մանավանդ լեռնային վայրերում, իր կիառությունը պահպանեց մինչև XX դարի առաջին տասնամյակները: Տեղեկությունների հաղորդման այս միջոցը հիմնականում իրականացվել է գյուղի զգիրի[4] միջոցով, ընդ որում, Ն-րան ընտրելիս հաշվի է առնվել նաև նրա ձայնի հնչեղության աստիճանն ու նրա արագաշարժությունը, որպեսզի լուրերը ժամանակին և հեշտությամբ տեղ հասցվեն: Հնագույն ժամանակներից սկսած մինչև XX դարի 20—30-ական թթ. յուրաքանչյուր հայկական գյուղ ունեցել է իր առանձին զգիրը, որի ապրուստը ապահովվել է ողջ գյուղի կողմից:

Բայց ինչքան էլ լավ ընտրված լինի ազդանշանողի դիրքը, այնուամենայնիվ, մարդու ձայնի շառավիղը մնում է համեմատաբար փոքր: Ուստի միանգամայն տրամաբանական է ձայնի հնչեղության ուժն ավելացնելու համար հատուկ գործիքներ շինելը, այն հաշվով, որ բոլոր շահագրգռվածները կարողանային պարզորոշ լսել լուրը: Այս բնագավառում հայերի մեջ լայնորեն տարածված են եղել թմբուկի, եկեղեցու զանգի, կոչնակի, շեփորի միջոցով գյուղի կամ քաղաքի բնակչությանը, զորքին հավաքելու և կարևոր լուրեր հաղորդելու սովորությունը:

Ինչպես մատենագրական, այնպես էլ ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ վաղ միջնադարից սկսած, որպես ազդանշանային միջոց թմբուկը հազվադեպ է օգտագործվել: Սակայն կարելի է ենթադրել, որ հնագույն ժամանակներում թմբուկը եղել է հաղորդակցության ազդանշանային կարևոր միջոց, բայց քրիստոնեության մուտք գործելուց և եկեղեցական զանգի լայնորեն տարածումից հետո այն իր տեղը զիջել է վերջինին:

Այնուամենայնիվ, պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ մինչև XIX դ. վերջն էլ թմբուկի միջոցով ազդարարվել են արտակարգ դեպքեր: Այսպես, Զեյթունին հարևան Կապան գյուղի հայերը, թուրք հրոսակների խժդժություններից նեղվելով, դիմում են զեյթունցիների օգնությանը: Հայազգի «Պապիկ փաշան սիրով ընդունելով անոնց առաջարկը, նվիրական թմբուկը զարկել տվավ: Բոլոր լսողները. թվով 300 հոգի, եկան հավաքվեցան նրա մոտ: Այս թմբուկը,— հաղորդում է Զեյթունցին,— օծած էր Սարգիս Եպիսկ. Կիլիկյան, որպեսզի անոր ձայնը լսողը անհրաժեշտաբար հետևի անոր՝ սրբազան կոչում մը համարելով զայն»[5]: Ե. Լալայանը հաղորդում է, որ Սիսիանում հարսանիքի շաբաթվա ուրբաթ օրը՝ «Հանդերձօրհնենքին», կանչում են «ղավալներին»՝ տեղական երաժիշտներին, նրանց կերակրում են, գինի խմեցնում, ապա տանում մի բարձր կտրան գլխի կանգնեցնում ու հրամայում, որ «քեռոօղլի» եղանակ նվագեն: Սրանով տղայի տերը բոլոր համագյուղացիներին հարսանիքի է հրավիրում[6]:

Հնչյունային հարվածող գործիքներից ազդարարման լավագույն միջոց են ծառայել կոչնակն ու եկեղեցու զանգը: Հայաստանի տերիտորիայով նահանջող հույների մասին խոսելով, Քսենոֆոնը գրում է, որ նրանց «հարկավոր էր ճարել ու տանել կրկնապատիկ կենսամթերք: Այս որոշելուց հետո [հելլեն զորավարները] ազդարարեցին կոչնակի միջոցով, որ այդպես անեն»[7]: Ուրեմն, պետք է որ նախօրոք պայմանավորված լինեին, որպեսզի առանց խոսքի, կոչնակի որոշակի զարկերից ողջ զորքը հասկանար, թե ինչ է պահանջվում:

Արդեն XIX դ. վերջում, Զեյթուն քաղաքի բնակչությանը ընկճել չկարողանալով, թուրքական կառավարությունը դիմում է ինչ-որ մի Թոփալ Սատո «զորապետի», որն իր խաժամուժ հրոսակներով մոտենում է Զեյթունին: Խորամանկորեն շրջապակելով նրա հրոսակներին, զեյթունցիները կազմակերպված ձևով սպասում էին ազդանշանի: «...Ասոնց [շրջապատող զեյթունցիներից] ամենն ալ կես գիշերին հրացանաձգություն պիտի սկսեին, երբ եկեղեցուց կոչնակները զարնեին. սա էր իրենց նշանը»,— ասում է Զեյթունցին[8]:

---

3 «Սասնա Ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, էջ 693:

4 Գյուղական պաշտոնյա, տանուտերին ստորադրյալ և նրա կարգադրությունները կատարող (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. Ա, Երևան, 1944, էջ 30):

5 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, Վիեննա, 1900, էջ 134:

6 «Ազգագրական հանդես», 1898, № 1, III տարի, Գ գիրք, էջ 217:

7 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 383:

8 Զեյթունցի, նշվ. աշխ., էջ 87—88:

Մեծ տեղ է դրավել նաև եկեղեցու զանգի միջոցով գյուղի բնակչությանը որևէ դեպք ազդարարելը։ Ի միջի այլոց, զանգը հնչեցրել են տարբեր դեպքերի համար տարբեր հաճախականությամբ և տարբեր տոնով։ Համայնքացիներից որևէ մեկի մահվան դեպքում այն հնչեցրել են զանգաղ ու հանդիսավորությամբ, հակառակորդի կողմից հարձակման ենթարկվելու դեպքում՝ ինչքան հնարավոր է արագ ու բարձրաձայն և այլն։

Հրալենի մուտք գործելուց հետո, հատկապես XIX դ. կեսերից սկսած, լայնորեն կիրառվում է նաև հրացանազարկի միջոցով ազդանշան տալու սովորությունը։ Այս կապակցությամբ ուշադրավ է Արցախում տարածված հետևյալ ավանդությունը, որի մասին հաղորդում է Ռաֆֆին։ Ղափանցի Դանլու-Շարան անունով մի հայ իշխան 300 ձիավորով հյուր է գալիս Ավետարանոց բերդի Մելիք-Միրզա բեկի մոտ։ Զնայած վերջինս հին ոխ է ունեցել իր հյուրի նկատմամբ, այնուամենայնիվ, սիրով ընդունել է նրան իր տուն և նրա անձնակազմին որպես հյուրեր բաժանել է իր գյուղացիների տներում։ Գյուղացիներին նախապես պատվիրված է եղել՝ հենց որ գիշերը Մելիքի տնից լսվի հրացանի ձայնը, ամեն մարդ պատրաստ լինի իր հյուրին սպանելու։ Այսպիսով, մի գիշերվա մեջ կոտորում են բոլոր երեքհարյուր ձիավորներին[9]։

Բնորոշ է, որ հայ գյուղում հրացանազարկի միջոցով ազդարարել են նաև այնպիսի լուրեր, ինչպիսիք են հարսանիքի սկսվելը, նորահարսի կուսությունը և այլն։ Այսպես, Վայոց Ձորում, հարսանիքից հետո, հաճախ տան կտուրից երեք անգամ հրացան են արձակել՝ ի նշան նորահարսի կուսության[10]։

Հայոց մեջ, հատկապես ռազմական գործում, լայնորեն կիրառվել է նաև ազդանշանային փողերի ու շեփորների միջոցով կարևոր իրադարձությունների կամ հրամանների հաղորդումը, որի մասին բազմաթիվ տեղեկություններ են տալիս մատենագիրները։ Այսպես, Ագաթանգեղոսը հաղորդում է. «Եւ Նորա (Տրդատը) առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապեաւ յառաջ մատուցաներ մինչև հանդիպման թշնամեացն...։ Եղիշեն գրում է. «Եւ երբ [պարսից բանակի զորավար Մուշկան Նիսալավուրտը] լսեց [հայ զորքերի] բազմութեան թիվն ու համարը, էլ ավելի շտապեց իմանալ, թե քանիսն են քաջ զինվորների պարագլուխները,... թե [հայոց] զորքը քանի գնդի են բաժանելու,... որ զորավարը որ կողմից պետք է պատերազմի մեջ մտնի,... և քանի փողհար պետք է ձայն արձակե գնդի մեջ»[12]։ Եվ ապա պարսից նույն զորավարը «...նշաններ բաշխեց, դրոշներ արձակեց և հրամայեց, որ մեծ փողի ձայնին պատրաստ լինեն»[13]։ Ուշագրավ է նաև Մովսես Կաղանկատվացու հետևյալ հաղորդումը. «Ապա [Աղվանից արքայազն Ջիվանշիրը, VII դ.] գտեալ առողջութիւն մտանէ առ արքայ [Հազկերտ] և նա [Հազկերտ արքան] դնէր զձեռն ի գլուխ Նորա, բանս բարեաց ի լուր ամենուն զնմանէ խօսէր, ըստ զօրավարաց կարգի տայր նմա նշանակս և փողս ազդեցութեան...»[14]։

Այսպիսով, դուրս է գալիս, որ «տագնապի» կամ «ազդարարության» «մեծ» փողեր (շեփորներ) հատկացվել են ոչ միայն հատուկ փողհարների, այլև գլխավոր զորավարներին։ Մյուս կողմից ուշագրավ է, որ հակառակորդ պարսից զորավարին, այլ կարևոր գործոնների հետ համահավասար, հետաքրքրել է նաև, թե «քանի փողհար պետք է ձայն արձակե գնդի մեջ»։ Ըստ երևույթին, գա ևս ռազմական տեսակետից կարևոր նշանակություն է ունեցել։

Սովորական կամ արտակարգ լուրերի հաղորդման պարզագույն, բայց և կարևոր միջոց են հանդիսացել նաև կից բնակարանների կամ բակերի միջնորմներում բացած սողանցքերը, որ հայ ժողովրդական բնորոշ արտահայտությամբ կոչվում են «ակնատ»[15] (նաև պատծակ, դրիճակ)։ Խոսելով Հարք գավառի մասին, Բենսեն վկայում է, որ այս կողմերում բնակարանը կառուցելիս երկու հարևան շինության միջնորմի մեջ թողնում են «փոքրիկ անցք՝ ակնատ»[16]։ Մինչև վերջին ժամանակներն էլ Հայաստանի շատ շրջանների (Սիսիան, Գորիս, Շիրակ, Ստեփանավան, Եղեգնաձոր և այլն) գյուղերում պահպանվում էին ակնատավոր բնակարան ունեցող որոշ թաղամասեր կամ առանձին բնակարաններ։ Այսպես, մինչև ներկա դարի սկիզբները Ալեքսանդրապոլ քա-

9 Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. X, 1959, էջ 204։

10 «Ազգագրական հանդես», 1906, XIII գիրք, էջ 164—165։

11 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, է, 45, էջ 33։

12 Ե ղ ի շ ե, Վարդանանց պատերազմը, Երևան, 1958, էջ 88։

13 Նույն տեղում, էջ 105։

14 Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 138։

15 Ըստ երևույթին, այս դեպքում նշանակում է «աչք ածել», «հետևել»։

16 «Ազգագրական հանդես», 1899, Ե գիրք, էջ 43։

ղաքի երկու մեծ թաղամասերի՝ «Գեղացոց մահլի» և «Ջորի բողազի» կամ «Ջորի մահլի» բնակարանների կից պատերին անընդմեջ բացած ակնատների միջոցով քաղաքի այս զանգվածի բնակչությունը վտանգի դեպքում արտակարգ արագությամբ հաղորդակից էր լինում։ Ընդ որում, «Գեղացոց մահլա» կոչված թաղամասը, բարձրության վրա գտնվելու շնորհիվ, ինքն էր կատարում դիտորդի և ազդարարողի դերը։ Այսպիսի դեպքերում բնորոշ կերպով զուգորդվում էին հաղորդակցության տեսողական ու հնչյունային ազդանշանային միջոցները։

Ակնատները լայնորեն օգտագործվում էին նաև առօրյա կյանքում։ Ստեփան Լիսիցյանը գրում է, որ դեռևս XX դ. 20-ական թթ. վերջերին Մեղրու շրջանի գյուղերի ազգակցական կամ հարևանական թաղամասերի բնակարանների կից կամ ընդհանուր պատերին բացում էին հատուկ քառակուսի անցքեր՝ «միմյանց կրակ, ուտելիք, ամանեղեն, մանր իրեր կամ տեղեկություններ փոխանցելու համար։ Դրանք խոսում են անմիջական հարևանների միջև անցյալում գոյություն ունեցած սերտ տնտեսական և, ամենայն հավանականությամբ, նաև ազգակցական կապերի մասին»[17]։

Բնակարանային սողովրդական ճարտարապետության ասպարեզում համապատասխան կառուցվածքների հանդիպում ենք նաև հարևան ժողովուրդների մեջ։ Այսպես, բալկարների 8—12 ընտանիքից բաղկացած մի ազգակցական թաղամասի բնակարանները տեղադրված են եղել կոմպակտ կերպով, մեկը մյուսի մոտ։ «Նման բնակելի կոմպլեքսներում (բալկարների, քրդերի, հայերի և այլոց) հարևան տների պատերը ունեցել են հատուկ քառակուսի անցքեր, լուսապատուհանի նման..., որոնք պատրոնիմիայի ընտանիքների միջև կապ պահպանելուն են ծառայել»[18]։ Սույնպիսի հատուկ սողանցքեր, բայց արդեն հարևան բակերի ընդհանուր պատերից բացած, հանդիպում ենք ալիզների, աբխազների, ավարների և կովկասյան այլ ժողովուրդների մոտ։

Այնուամենայնիվ, ազդարարման տեսողական միջոցները ավելի լայն չափով են տարածված եղել, քան հնչյունայինը։ Հաղորդակից լինելու այդ եղանակների սկիզբը դրել են մարդու մարմնի շարժումները։ Ինչպես լեզուն ազդարարության ամենապարզ հնչյունային միջոցն է, այնպես էլ ազդանշանային տեսողական միջոցների նախաձգրնական ձևը շարժումն է։ Շարժումը հաճախ արտահայտում է պայմանական որոշ բառեր, թվանշաններ, տրամադրություններ կամ երկրի կողմեր։ Բայց երբեմն այն կարող է դառնալ խոսքի իսկական փոխարինող, ընդ որում, արտահայտության, դիմախաղերի ձևերի կամ շարժումների հերթագայությունը օգտագործվում է ամբողջ նախադասություններ կազմելու համար։

Տեսողական ազդանշանների հասանելիության շառավիղը հիմնականում գերազանցում է հնչյունայինին, ուստի լավ մշակվել են մարդու տեսանելիության հեռավորությունը մեծացնելու եղանակները, առաջին հերթին՝ կրակի և ծխի օգնությամբ։ Պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք վկայում են, որ հայերի մեջ կրակի կամ ծխի միջոցով ազդանշան տալու սովորությունը գալիս է ամենահնագույն ժամանակներից։ Այսպես, Քսենոֆոնը (V դ. մ. թ. ա.) «Սահանջ բյուրոցում» հիշատակում է, որ Հայաստանի տերիտորիայով նահանջող հույները գիշերը «...բանակեցին... գյուղերում, իսկ կորդուխները լեռների վրա չորս կողմը կրակ էին վառում շատ տեղերում և իրար ազդանշան էին տալիս»[19]։

Հեռավոր ժամանակներից ավանդաբար մեզ հասած և Հովհ. Թումանյանի կողմից գողտրիկ չափածոյի վերածած լեգենդը («Աղթամարտ») Վանա լճում գտնվող Աղթամար կղզու անվան առաջացման մասին՝ նույնպես մեզ տանում է հնագույն ժամանակները։ Երիտասարդ սիրահարն ամեն գիշեր լողալով անցնում է դեպի կղզին՝ ուղենիշ ունենալով իր սիրեցյալ Թամարի կողմից դարանում արված խարույկի կրակը[20]։

Ինչպես վկայում են ազգագրական նյութերը, կրակի միջոցով ազդանշան տալիս ազդարարողներն աշխատել են հնարավորին չափ քողարկել կրակը, որպեսզի հակառակորդի կողմից չնկատվի։ Այդ նպատակով, եթե տեղանքը թույլ է տվել, խարույկը վառել են բլրալանջի այն

---

17 Ст. Лисициан, Из материалов по изучению жилищ Армении, I, Крестьянское жилище Мегринского района, «Известия Кавказского историко-археологического ин-та». Тифлис, 1927, VI, էջ 131։

18 Մ. Օ. Կոսվեն, Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 97։

19 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 382։

20 Տե՛ս նաև Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելեան Տաճկաստանի, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 201—202. այստեղ խոսվում է մինչև XIX դ. վերջերն էլ Վանա լճի ավազանում գոյատևող ազդանշանային միջոցի մասին։

կողմում, որտեղից միայն յուրայինները կարող էին տեսնել կրակը։ Շատ հաճախ էլ կողմերը պայմանավորվել են կրակը ընդմիջումներով վառել-մարելու հաճախականության մասին, որպեսզի իրենցից բացի ոչ ոք չհասկանա դրա իմաստը։

Խարբերդ գավառի Ծովք գյուղից 1915 թ. թուրքական ջարդարարների յաթաղանից մազապուրծ եղած մի խումբ գաղթականներ պատմում են հետևյալը. «...Գիշերը Անանիայի նավակով փոխադրվեցինք լճի մյուս ափը։ Իր վերադարձին մեզ տրվելիք նշանը որոշելով, համբուրվեցինք հաջողության մաղթանքներով։ Հաջորդ օրը որոշյալ ժամին բոլորս էլ աչքերս հառած... սպասում էինք մեզ տրվելիք նշանին։ Ուշ գիշեր էր. ահա կրակի բոցը, որը մարեց շատ շուտով. ու այսպես երկրորդը, երրորդը։ Այլևս ոչ մի տարակույս՝ Անանիան է»[21]։

Կրակի միջոցով ազդանշան տալու սովորությունը չայնորեն տարածված է եղել նաև Առաջավոր Ասիայի և կովկասյան ժողովուրդների մեջ։ Այս տեսակետից առավել բնորոշ է արաբ մատենագիր Յակուկ Ալ-Համավիի (1178—1229 թթ.) վկայությունը։ Նա ստրատեգիական կարևորագույն լեռնանցք հանդիսացող Դերբենդի (Ճորս պահակ) մասին գրում է. «Սահմանագլխային այս հոյակապ քաղաքը [հյուսիսային կողմից] շրջապատված է բազմացեղ և այլալեզու թշնամի ժողովուրդներով։ Նրա մոտ է բարձրանում Ջիբ կոչված սարը, որի գագաթի վրա ամեն տարի դիզում են մեծ քանակությամբ ցախ՝ կրակ վառելու համար, որպեսզի նշան տան Ադրբեջանի, Առանի և Արմենիայի ժողովուրդներին, երբ թշնամին հանկարծ հարձակում կատարի»[22]։

Հայերի մեջ տարածված է եղել նաև կրակի միջոցով գյուղատնտեսական այս կամ այն աշխատանքի սկսելը կամ վերջացնելը ազդարարելու սովորությունը։ Այսպես, նույն Խարբերդ գավառի Ակն քաղաքում, որտեղի բնակչությունը սերտորեն կապված էր գյուղատնտեսության հետ, կար ժողովրդի կողմից ընտրված հատուկ պաշտոնյա՝ «ջրպան», որը խստորեն հետևում էր ջրաբաշխմանը։ Արդեն գյուղատնտեսական աշխատանքների վերջում, «երբ ջրբաշխության եղանակը վերջանար, ջրպանը լեռներուն վրա խոշոր խարույկ մը կվառեր, զոր մեծ հաճույքով գիտել կերթային գյուղացիները»[23]։

Հասկանալի է, որ ցերեկը կամ տեղանքի անհարմար պայմաններում կրակով ազդանշան տալը չէր ծառայի իր նպատակին այնպես, ինչպես հարկն է։ Այս դեպքում կողմերը պայմանավորվել են ազդարարությունը կատարել ծխի միջոցով։ Դժբախտաբար այդ մասին եղած նյութերը շատ կցկտուր են ու աննշան։ Մեր մատենագիրներից միայն Առաքել Դավրիժեցին է (XVII դ.), որ այդ մասին հիշատակություն է անում, որը վերաբերում է հարևան պարսիկներին։ Նա գրում է. «...Յայնժամ կողմն Պարսից վաղվաղակի ըստ պայմանելոյն իւրեանց բարձրացրին ծուխ նշանին, և ի տեսանել դարանամուտ Պարսիցն զ՝ծուխն, դիմեցին ի վերայ զօրացն օսմանցւոց»[24]։

Կյանքի անապահով վիճակը, անընդհատ հարձակման ենթարկվելու վտանգը գյուղական համայնքին ստիպել է աչալուրջ կերպով հետևելու իր շրջակայքին։ Այդ նպատակով, ելնելով տեղանքի պայմաններից, գյուղացիները կառուցել են հատուկ գիտարան-աշտարակներ, ինչպես գյուղից դուրս՝ լեռնագագաթներին, այնպես էլ գյուղամիջում։ Բնորոշ է Քսենոֆոնի վկայությունը հայ գյուղի կառուցվածքի մասին։ Կորդվաց աշխարհի «...այն գյուղը,— գրում է նա,— ուր նրանք [հույները] եկան՝ մեծ էր, ուներ սատրապի համար ապարանք-ամրոց և տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ»[25]։

Սիսիանի շրջանի Որոտնա բերդի միջնաբերդում կա մի ավերակ մատուռ, իսկ սրանից ձախ, ժայռի ամենաբարձր տեղում՝ մի շինություն, որը միայն երկու պատ ունի։ Ե. Լալայանը հայտնել է այն կարծիքը, որ դա պետք է, որ դիտարան եղած լինի[26]։ Բազմաթիվ ու բազմապիսի աշտարակ-դիտարաններ են կառուցվել Հայկական լեռնաշխարհի Սյունիք, Վայոց Ձոր, Լոռի, Արցախ և այլ ազգագրական շրջաններում։ Այսպես, Արցախի Հաթերք գավառում (Ըստիսական, Ըոստակ), Թարթառ գետի ձախ ափի բարձրության վրա կա բնակարանանման վիմափոր մի դիտարան, որն ունի միայն մեկ լուսամուտ և դուռ չունի։ Բայց այս դիտարանը մուտք գործելու համար ժայռի դրսի կողմից ոչ մի վերելակ սանդուխք չկա, իսկ ներսից անհայտ է մուտքի տեղը։ Արտաքուստ պարզ երևում են քարակիր պատն ու լուսամուտը։ Ենթադրում են, որ այս դիտարանը

21 Վահե Հայկ Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 778—779։

22 Հ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 24։

23 Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 21—22։

24 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 76։

25 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 384։

26 «Ազգագրական հանդես», 1898, № 1, III տարի, Գ գիրք, էջ 154։

գաղտնի հաղորդակցական կապ է ունեցել Թարթառ գետի աջ ափին գտնվող Խաթրա և Հավքաղաց կոչվող բերդի հետ և հակառակորդի հարձակումը կանխելու նշանակություն է ունեցել։

Դիտարանների տեղը հաճախ ընտրվել է այնպես, որ նախօրոք պայմանավորված և այնտեղից տրված ազդանշանները տեսանելի լինեն շրջակա մի շարք գյուղերի։ Կասկածելի որևէ բան նկատելիս դիտորդները կրակի, ծխի, հրացանազարկի, ձիավոր դուժկանի կամ այլ միջոցով ազդարարել են վերահաս վտանգը։

Գյուղական վայրերում աշտարակ-դիտարաններ կառուցելու սովորությունը տարածված է եղել նաև Հայաստանին հարևան մյուս ժողովուրդների մեջ։ Հայտնի է, օրինակ, որ ավարական և վրացական շատ գյուղերում, մինչև XIX դ. վերջը և XX դ. սկիզբը պահպանվում էին ազգակցական թաղամասեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին աշտարակը[27]։ Որոշ գյուղերում այդ աշտարակների թիվը հասել է 8—10-ի։

Որոշ համանման ազդանշաններ կրկնելուց խուսափելու համար հայերը համապատասխան միջոցներ են ստեղծել դրանց քիչ թե շատ մշտական բնույթ հաղորդելու. այդպիսիք են, օրինակ, անծանոթին կամ մոլորյալին ճիշտ ճանապարհը ցույց տալու, մոլորվելիս օգնություն հայցելու, սեփականությունն ազդարարող և այլ նշաններ։

Այս կարգի հնագույն տեղեկություններից մեկը կարելի է համարել, օրինակ, Ստրաբոնի հետևյալ վկայությունը. «Հայաստանի ամենահյուսիսային գավառները,— գրում է նա,— ...շատ ձյունառատ[են]... Այնպես, որ ասում են, թե շատ լեռնանցքներում և կիրճերում ամբողջ կարավաններ ձյունի տակ են մնում բուքի ժամանակ։ Այդպիսի վտանգների համար նրանք ունենում են ձողեր [հավանաբար՝ եղեգնյա], որը բարձրացնում են [ձյունի միջով] վերև՝ շունչի անցք բանալու և նշան տալու համար անցորդներին, որպեսզի օգնության հասնեին, ձյան տակից հանեին ու ազատեին»[20]։

Նշանավոր արձակագիր Վրթ. Փափազյանը, որը բավական մոտիկից ուսումնասիրել է հարբոշաների նյութական ու հոգևոր մշակույթի շատ կողմեր[29], իր զարմանքն է հայտնում առհասարակ գնչուների, ինչպես նաև հայ բոշաների տեղագրական ճանաչողության ընդունակությունների մասին։ Գնչուների յուրաքանչյուր խումբ, ասում է նա, անցնելով որևէ տեղով, զանազան, միայն գնչուներին հասկանալի նշաններ է գծում պատերի կամ ծառերի բների վրա և հետագա խումբը տեսնելով այդ նշանները, հասկանում է դրանք։ Ամենասովորական նշանները, որոնք հնուց ի վեր գործածական են նրանց մեջ, հետևյալներն են՝



Գնչուական ազդանշաններ

Սրանցից առաջինը, եռաժանին, ինչպես երևում է, ամենագործածականն է և կոթը ցույց է տալիս գնալիք ճանապարհի ուղղությունը։ Երկրորդը, որը բուդգիստական մի հին նշան է, գործածվում է ճանապարհի փակված կամ վտանգավոր լինելը ցույց տալու համար։ Երրորդ խաչաձև նշանի երկար կոթը նույնպես ցույց է տալիս ճանապարհի ուղղությունը, իսկ չորրորդը, որին ավելի հաճախ կարելի է հանդիպել Թուրքիայում, նշանակում է, որ այդ ճանապարհով գնալը խիստ վտանգավոր է և նույնիսկ մահացու։ Այս և նման նշանների ու դրանց իմաստի գաղտնապահությունը չափազանց մեծ նշանակություն է ունեցել գնչուների աստանդական կյանքում։

---

27 Մ. Օ. Կ ո ս վ ե ն, նշվ. աշխ., էջ 97։ Նաև՝ Р. Х а р а д з е, Грузинская семейная община, Тбилиси, 1961, հատ. II, էջ 60—62։

28 Ս տ ր ա բ ո ն, Երևան, 1940, էջ 57։

29 Վ ր թ. Փ ա փ ա զ յ ա ն, Հայ բոշաներ. ազգագրական ուսումնասիրություն, «Ազգագրական հանդես», 1898, № 1 և № 2։

Ճանապարհորդներին վտանգներից ու մոլորվելուց պաշտպանելու նպատակով հայերը առանձնապես վտանգավոր լեռնանցքներում քարերի, ծառերի և այլ միջոցներով նշան են արել, որպեսզի ճանապարհորդը վտանգի չենթարկվի կամ ճանապարհը չմոլորի։

Բնականաբար, քարաշատ Հայկական բարձրավանդակում առանձնապես տարածված են եղել քարե ուղենիշեր («նշանկա» կամ «նշանկեա»)[30]։ Սասունում, որտեղ ձմեռը տևում էր 4—5 ամիս, մոլորյալին ճիշտ ճանապարհը նշելու համար աչքի ընկնող տեղերում «դեղվաններ» էին կանգնեցնում։ Դեղվանները 1—2 մ տրամագիծ ունեցող խարիսխի վրա քարերից շարված կոնաձև քարակույտեր էին, որոնք ունեին 2—3 մետր բարձրություն, դրանք շինվում էին աչքի ընկնող բարձր տեղերում, որպեսզի ձյունը չծածկեր։ Ընդհանրապես քամին կամ բուքը լիզում են բարձր տեղի դեղվանի վրայի ձյունը և նա միշտ բաց է մնում[31]։ Ե. Լայայանը հաղորդում է, որ Ուշ-Թափալարի բարձրավանդակում այնպես խիստ էին լինում ձմռան բքերը, որ Գորիսի և Սիսիանի միջև հաղորդակցությունն ընդհատվում էր մի քանի ամսով։ Դեռ հին ժամանակներից այս տեղերում բարձր քարեր են տնկել և մի հսկայական ծառ աճեցրել ճանապարհի կողքին, որպեսզի բքից բռնված ուղևորը կարողանա ճանապարհը գտնել[32]։ Նույնպիսի ուղենիշ քարերի մասին է գրում Հ. Լինչը։ Արարատի լանջին գտնվող հին Ակոռի գյուղից ոչ հեռու՝ ճանապարհի ուղղությամբ «քարի շարքեր հյուսված են. ասիկա նշան մըն է բարեպաշտ ուղևորներու համար»[33]։

Բնական, անտաշ ուղենիշ քարերի առավել զարգացած աստիճան պետք է համարել պատմական Հայաստանի ողջ տերիտորիայով մեկ սփռված ուղենիշ խաչքարերի հոյակապ նմուշները, որոնցից մեծ քանակությամբ պահպանվել են Զանգեզուրի, Լոռու, Շիրակի, Վայոց Ձորի և այլ վայրերի հնագույն կամ հին ճանապարհների ու արահետների փեշերին։

Հնագույն ժամանակներից հայերի մեջ լայնորեն տարածված և մինչև մեր օրերը պահպանված կամ պատկանելիություն, սեփականություն ազդարարող նշանները նույնպես իրենցից այլ բան չեն ներկայացնում, քան հայտարարություն, որ այսինչ իրը պատկանում է այսինչ անձնավորությանը կամ անձնավորությունների խմբին։

Հայերը նշաններ արել են ընտանի կենդանիների ականջներին, ազդրերին կամ գավակին։ Ցվյալ վայրում յուրաքանչյուր սեփականանշանից կարող էր օգտվել միայն տերը, լինի դա առանձին անձնավորություն, ընտանիք կամ ամբողջ տոհմ։

Հայաստանի անտառաշատ վայրերում (Իջևան, Շամշադին, Լոռի), որտեղ առավել տարածված է եղել վայրի մեղուն, գյուղացիներից այն անձնավորությունը, որն ավելի շուտ է գտել մեղուների բնական փեթակը (ծառափչակը), դրա վրա դրել է իր կողմից սահմանված և մյուսների կողմից ճանաչված նշան։ Այդ կերպ նշված ծառափչակ-փեթակը այդուհետև պատկանել է նրան և սովորութական իրավունքի ուժով ոչ ոք չի օգտվել դրանից, առանց նրա թույլտվության։

XVII դ. թուրք պատմագիր Քյաթիբ Չելեբին հաղորդում է, որ Բայբուրգի արևելյան կողմում «բերդի տակից հոսում է մի մեծ գետ։ ...Վերոհիշյալ գետի միջոցով է փոխադրվում լեռան վրա կտրված փայտը։ Երբ փայտը քաղաք է հասնում, ամեն մարդ, ոստ իր նշանի, վերցնում է իր փայտը»[34]։

Սեփականությունն ազդարարող նշանները տարածված են եղել նաև ինչպես հայ ժողովրդին հարևան, այնպես էլ հեռավոր համարյա բոլոր ժողովուրդների մեջ։ Այդ նշաններով խարանել են կենդանիներին, ստրուկներին, հանցագործներին, գործիքները և այլն։

Հայ ժողովրդական էպոսի միջոցով պահպանվել և մեզ է հասել նաև դեռևս մայրիշխանության ժամանակներից եկող ազդարարելու մեկ այլ միջոց։ Այսպես, երբ Փոքր Մհերը պատրաստվում է երկար ժամանակով տնից հեռանալու, կնոջը պատվիրում է.

---

30 Գ. Հ ա լ ա ջ յ ա ն, Դերսիմի ազգագրություն (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, 5ա թղթապանակ, էջ 254)։ Նաև՝ Մ. Մ ի ր ա խ ո ր յ ա ն, նշվ. աշխ., մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 120—121։

31 Վ. Պ ե տ ո յ ա ն, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 176—177։

32 «Ազգագրական հանդես», 1898, Դ գիրք, էջ 24։

33 Հ. Լ ի ն չ, Հայաստան, Ուղևորություններ և ուսումնասիրություններ, հատ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 123։

34 «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. II, Երևան, 1964, էջ 43։ Մ. Մ ի ր ա խ ո ր յ ա ն, նշվ. աշխ., մասն Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 11—12։

...Կառնիս զիմ զուրզ տուս կը դնիս, Լստեղ կմնա,
Ինչ փալավանմտիր կը կան,
Գուրզ կը տեսնին վար տուան.
Քեզի նեղուրին չին իտա.
Կասին՝ Մեր տան բնուկ ի[35],

Ազդանշանային միջոցների մեկ այլ կարգը ուղղված է ոչ այնքան լայն հասարակությանը, որքան որոշակի անձնավորության կամ ճշտությամբ նշանակված խմբին։ Այս դեպքում դրանց «տեքստը» ճիշտ «կարդալ» կարող էին միայն պայմանավորված երկու կողմերը։

Ազդանշանային նման միջոցներից օգտվել են նաև հայերը։ Այդպիսի ազդարարման աղոտ հիշատակումների բազմաթիվ օրինակներ կան հայ ժողովրդական հեքիաթներում, որոնցից ամենաբնորոշը «Անահիտ» հեքիաթում եղածն է։ Խավար գնդանում ձերբակալված Վաչագանն իր ձեռքով գործած դիպակի վրա այնպիսի նախշեր ու նշաններ է անում, որ հեռավոր վայրում գտնվող նրա կինը՝ Անահիտ թագուհին, տեսնելով այն, իսկույն կռահում է, որ Վաչագանը վտանգի մեջ է և իսկույն շտապում է օգնության[36]։

Ամփոփելով վերը նշվածը, անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես ամենուր, այնպես էլ հայերի մեջ հաղորդակցության պայմանական կամ ազդանշանային միջոցները բաժանվել են երկու կարգի՝ ժամանակավոր և մշտական։ Ամեն տեսակի ազդանշան, ինքնըստինքյան, ենթադրում է պայմանավորվածություն, այլապես այն ոչ մի իմաստ կամ նպատակ չի ունենա։ Այդ պայմանավորվածությունը ի նկատի է ունենում ազդանշանի վայրը, ժամանակը, տեսակը կամ հաճախականությունը և այլն։ Մյուս կողմից, գոյություն են ունեցել ազդանշաններ, որոնք հայտնի են եղել տվյալ վայրի համայնքի կամ ազգագրական խմբի անդամներին, և առանց նախօրոք պայմանավորվածության էլ, տվյալ ազդանշանը լսելուց հետո, համայնքի յուրաքանչյուր անդամ ցուցաբերել է համապատասխան վերաբերմունք։ Դրանք հիմնականում ավանդաբար սերնդե-սերունդ անցած մնայուն ազդանշաններ են։ Հարկ է ընդգծել նաև, որ եթե բոլոր ազդանշանային միջոցները եղել են պայմանական նշաններ, այնուամենայնիվ, ոչ բոլոր պայմանական նշաններն են, որ կարելի է կոչել ազդանշանային։ Այսպես, ճամփեզրերի ուղեցույց քարերը, պատկանելիություն կամ սեփականություն ազդարարող և այլ նշաններ, պայմանական նշաններ հանդիսանալով հանդերձ, ազդանշաններ չեն, քանի որ վերջինները (ազդանշանները) կրում են ժամանակավոր բնույթ։ Կարելի է ուղղակի ասել, որ որևէ բան ազդարարող ժամանակավոր նշանները ազդանշաններ են, իսկ մշտական ազդերը՝ պայմանական նշաններ։

Ազդանշանային հաղորդակցության հիշյալ միջոցներից հայերն օգտվել են ընդհուպ մինչև մեր դարի առաջին տասնամյակները, որից հետո դրանք աստիճանաբար փոխարինվել են նոր և նորագույն միջոցներով։

---

35 «Սասնա ծռերը», հատ. Ա, 1936, էջ 229։

36 Ղ. Աղայան, Հեքիաթներ, Երևան, 1959, էջ 3—37։